

ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՌՈՒՍ-ՇՍՅԵՐԵՆ ՔԱՌԱՀԱՏՈՐ ԲԱՌԱՐԱՆԻ

ՄԱՆՈՒԿ ՖԱԼՍԿՅԱՆ

Սովետական կարգերի հաստատումից հետո դարերի պատմություն ունեցող հայ բառարանագրության հետագա զարգացման համար ստեղծվեցին աննախընթաց նպաստավոր պայմաններ: Հայ պետականության վերականգնման հետ լեզվաբանությունը, բառարանագրությունը, ինչպես և գիտության մյուս ճյուղերը, դարձան պետության, ողջ ժողովրդի գործը: Վերջին վաթսու տարիների ընթացքում ստեղծվել են հայերենին առնչվող ամենաբազմապիսի և բազմաբնույթ բառարաններ, որոնց մի մասն ընդհանրապես նորություն է հարուստ ավանդույթներ ունեցող հայ բառարանագրության մեջ:

Սովետական շրջանում առանձնահատուկ նշանակություն է ստանում և հատկապես զարգանում է ռուս-հայերեն բառարանագրությունը: Ստեղծվում են տարբեր ծավալի մի շարք ընդհանուր և մի քանի տասնյակ մասնագիտական ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարաններ: Զիշտ է, մինչև 1950-ական թվականները հրատարակված բառարաններն այժմ որոշ չափով հնացել են ու կորցրել գործնական նշանակությունը, սակայն պահպանել են իրենց գիտական արժեքը և առատ նյութ են պարունակում հայերենի բառապաշարի տեղաշարժերի, հայ գիտատեխնիկական և նոր քաղաքական տերմինաբանության ստեղծման պատմության ու մշակման ընթացքի ուսումնասիրության համար:

Ռուսերենին առնչվող բառարանագրության բուռն զարգացումը պայմանավորված է մի քանի հանգամանքներով, որոնցից առաջինը ռուսերենի՝ որսյես ՍՍՀՄ ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցման լեզվի դերն ու նշանակությունն է: Այդ ֆունկցիայի հենց ռուսերենի կողմից կատարումն ունի իր սոցիալ-պատմական մի շարք նախադրյալները: Ռուսաց լեզուն, «ամենաուժեղ և ամենահարուստ կենդանի լեզուներից մեկը» (Ֆ. Էնգելս)¹, սովետական բազմազգ երկրի ժողովուրդների լեզուների, այդ թվում նաև հայերենի (հատկապես նրա բառապաշարի) հարստացման հիմնական աղբյուրներից մեկն է: Ռուսաց լեզվի միջոցով են մեր երկրի ազգերը և սոցությունները փոխադարձաբար շփվում միմյանց հետ կյանքի բոլոր բնագավառներում: Ռուսերենի իմացությունը հնարավորություն է տալիս Սովետական Միության ժողովուրդներին ծանոթանալ և հաղորդակցվել ռուսական, ինչպես նաև համաշխարհային մշակույթի գանձերին: Ռուսերենի միջոցով հայ ընթերցողը ծանոթանում է ՍՍՀՄ մյուս ժողովուրդների մշակույթներին, իրենց հերթին հայկական արվեստի և գրականության խոշոր նվաճումները թարգմանվելով ռուսերեն՝ միջազգային ասպարեզ դուրս գալու հնարավորություն են ստանում:

Հայ ժողովրդի կյանքում ռուսերենի ունեցած այս բազմազան ու մեծ դերն էլ պահանջում է ռուս-հայերեն և հայ-ռուսերեն զարգացած բառարանագրություն: Սովետահայ հենց առաջին բառարանները կապված են ռուսերենի հետ: Իսկ մինչև 1930-ական թվականները թեև ստեղծվել էին բազմաթիվ մասնագիտական ռուս-հայերեն թարգմանական բառարաններ, սակայն չկար լիակատար ռուս-հայերեն ընդհանուր մի բառարան, որը կարողանար բավարարել ընթերցող լայն շրջանների նոր պահանջները: Այդ բացը լրացնելու համար 1933—1935 թթ. հրատարակվեց Բ. Ավդալբեկյանի, Պ. Սոտնիկյանի, Ե. Տեր-

¹ К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. XV, с. 239.

Մինասյանի, Վ. Փոթեյանի երկհատոր «Ռուս-հայերեն նոր բառարանը», որը ժամանակին խոշոր դեր խաղաց հայ մշակութային կյանքում: Սակայն այս բառարանի հրապարակումից երկու տասնամյակ անց՝ 1950-ական թվականներին կեսերին, ռուսերենի և հայոց լեզվի բառապաշարներում կատարվել էին որոշակի տեղաշարժեր, կայունացել և նորմավորվել էր նրանց բառային կազմը: Իսկ 1940 թ. կատարվել էր հայերենի ուղղագրության մասնակի բարեփոխում: Կրկին նոր, առավել կատարելագործված և լիակատար ռուս-հայերեն ընդհանուր բառարանի սյահանջ էր առաջացել:

1950-ական թվականներին կեսերին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան հրատարակում է Ե. Տեր-Մինասյանի, Վ. Փոթեյանի, Հ. Կուսիկյանի, Հ. Համբարձումյանի և Մ. Գևորգյանի քառաձայնոր «Ռուս-հայերեն բառարանը»: Այս բառարանը պարունակում է մոտ հարյուր հազար բառահոդված: Աշխատության հեղինակները ձգտել են հնարավորության սահմաններում ամբողջությամբ ներկայացնել ժամանակակից գրական ռուսերենի բառադարձվածային հարստությունը: Բառարանն իր մեջ ընդգրկում է ռուսերենի բառապաշարը Պուշկինի դարաշրջանից սկսած մինչև քսաներորդ դարի կեսերը:

Բառարանի ռուսական մասի բառացանկի համար հիմք է ծառայել Դ. Ուշակովի իմբագրությամբ լույս տեսած «Ռուսերենի բացատրական բառարանը»: Սակայն այս բառարանը կազմված լինելով 1930-ական թվականներին, բնականաբար, չէր կարող արտացոլել հետագա տարիներին ռուսաց լեզվի բառային կազմում տեղի ունեցած տեղաշարժերն ու շոշափելի փոփոխությունները: Այս նկատի ունենալով՝ ռուս-հայերեն քառաձայնոր բառարանի հեղինակները ձգտել են ռուսական բառացանկում կատարել համապատասխան լրացումներ և ուղղումներ: Մասնավորապես՝ ա) բառարանն հնարավոր է երկրի տնտեսական և մշակութային կյանքում վերջին տասնամյակներում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով նոր ստեղծված կամ փոխառված բազմաթիվ բառեր և արտահայտություններ, սակայն, հատուկ նշումով, պահպանված են նաև ռուսական դասական գրականության մեջ հանդիպող այժմ հնացած, սակավ գործածական կամ բարբառային որոշ բառեր. բ) ճշգրտված է բառերի ոճական բնութագրումը. գ) ուղղորդվում է դարձված բառերի նշանակությունների տարբերակմանը և համանունների առանձնացմանը. դ) ճշտված են ռուսերեն բառի ուղղագրությունն ու շեշտադրությունը. ե) պարզեցված և կրճատված է Ուշակովի բառարանում ընդունված հղումների համակարգը: Բացի այդ, հեղինակները, օգտագործելով «Սովետական մեծ հանրագիտարանը», ճշտել և գիտության վերջին խոսքին համապատասխան են ներկայացրել շատ բառերի ու տերմինների բացատրություններ: Բառարանում ավելացված են օրինակներ մարքսիզմի դասականների երկերից, ռուս ժամանակակից գեղարվեստական, ինչպես նաև գիտական գրականությունից:

Հեղինակները, քննադատաբար մոտենալով նախորդ մեծածավալ «Ռուս-հայերեն նոր բառարանին», օգտագործել են նրա հաջողություններն ու հայ բառարանագրություն բերած նորությունները՝ միաժամանակ փորձելով խուսափել վերջինիս թերություններից: Նրանք, մասնավորապես, մեծ տեղ են տվել նորաբանություններին և սովետական շրջանում կազմված նորագույն հապավումներին: Այս բառարանի հեղինակները հրաժարվել են երկհատոր բառարանում տեղ գտած աշխարհագրական անուններից ու անձնանուններից, ինչպես նաև, որոշ չափով, հատուկ ածանցներով կազմված իգական սեռի այն գոյականներից, որոնք ցույց են տալիս այլևայլ մասնագիտությունների տեր կանանց: Քառաձայնորում ուղղված են նաև նախորդ բառարանում հայերենի ունի ածանցով թարգմանված բազմաթիվ անհաջող բառեր (ինչպես՝ КОЛО-НИСТКА—գաղութակ, ПОКОИНИЦА—մեռելուհի): Բայց պետք է վիճելի հաշվարել այն, որ չորսհատորանոց բառարանից դուրս են թողնված մի շարք միջազգային քաղաքական և մշակութային տերմինների հայերեն թարգմանու-

թյունները, որոնք թեև հիմնականում արևմտահայերենում են գործածվում, բայց մտնում են հայերենի բառային ֆոնդի մեջ և պետք է տեղ գտնեին այսպիսի մեծածախալ և լրակատարության ձգտող բառարանում:

Ռուս-հայերեն քառահատոր բառարանում բառերը դասավորված են այբբենական կարգով: Տեղի խնայողության նպատակով բառարանում չեն տրված տարբեր խոսքի մասերին պատկանող այնպիսի բարդ բառեր, որոնց նշանակությունն առանց դժվարության հասկացվում է իրենց կազմությունից: Նույն նկատառումներով բառարանից բաց են թողնված նաև ածականների բաղդատական -ес և գերադրական -ейшій մասնիկներով ձևերը, մակբայների գերադրականի (-ейте, -айте վերջավորություններով) ձևերը, եթե դրանք նշանակություն ունեն անանհատականություն չունեն: Այս դեպքերում հեղինակները հետևել են ռուսերենի բացատրական բառարանների կազմության մեջ ընդունված սկզբունքներին:

Այս բառարանում, հաշվի առնելով հայ ընթերցողների շահերը, հեղինակները տեղ են տվել նաև բառերի թևքված, փոփոխված ձևերին, եթե նրանց հիմքը տարբերվում է ուղիղ ձևի հիմքից: Այսպիսի դեպքերում արված է հղում հիմնական բառակնին, օրինակ՝ брел—անցյալ брести բայի, порашу—ապականի порастить բայի և այլն:

Բառարանում, ուղիղ փակագծերի մեջ, բերված և բացատրված են լայն զործածություն ունեցող բառակազմական ձևությունները (ինչպես՝ анти-, дву-, гор-, про-, при-, по-, -дневный, -колесный, -этажный, -фикация և այլն): Բացատրելով այս ձևությունների նշանակությունները, հեղինակները բառարան չեն մտցրել դրանցով կազմված շատ բառեր՝ նրանց թարգմանությունը թողնելով ընթերցողին: Սրանց նման, բառարանից բաց են թողնված архи-, наи-, пре-, раз-, рас-, ультра- նախածանցներով կազմված բառերը, որոնք ցույց են տալիս որևէ հատկության ծայրահեղ աստիճան (բացատրված են միայն նախածանցները): Բառերի բացատրության այս սկզբունքն օրինաչափ է ռուսերենի բացատրական բառարանների համար: Սակայն թարգմանական բառարանում, մեր կարծիքով, առավել ճիշտ կլիներ վերջին նախածանցներով բառերը տալ որպես գլխաբառեր և թարգմանել դրանք, քանի որ այդ նախածանցներով (մանավանդ архи- և ультра-) կազմված բառերի թարգմանությունը հայերենում միօրինակ չէ և կարող է շփոթության տեղիք տալ:

Դ. Ուշակովի «Ռուսերենի բացատրական բառարանում», տեղի խնայողություն նպատակով, չեն առանձնացված -ание, -ение, -тие վերջածանցներով կազմված բայական գոյականները, որոնք հեշտությամբ կարելի է կազմել համապատասխան բայերից: Ռուս-հայերեն քառահատոր բառարանում այս վերջածանցներով բառերը տրված են որպես առանձին գլխաբառեր (ինչպես՝ загнивание, заживание, разгребание, вымирание, угадывание, крашение, влитие, отбитие և այլն): Հեղինակները ճիշտ են վարվել այս բառերը մուծելով ռուսական բառացանկի մեջ, քանի որ իրենց բառարանը նախատեսված է ռուսերենով հետաքրքրվող ամենալայն շրջանների համար, և, բնականաբար, նրանից ոչ բոլոր օգտվողները կարող են ծանոթ լինել ռուսաց լեզվի բառակազմության օրենքներին ու ինքնուրույն կազմել նման վերջածանցներով բայանուններ և որևէ համապատասխան բայեր: Նշենք նաև, որ այս վերջավորություններով բառերն ընդհանրապես առաջին անգամ ռուս-հայերեն բառարանագրության մեջ ներկայացված են այս բառարանում: Դարձյալ տեղի խնայողության նպատակով Դ. Ուշակովի բառարանից դուրս են թողնված նաև -есть, -ость վերջածանցներով կազմված վերացական գոյականները: Նախորդ բառախմբի նման, այս բառերին ևս քառահատոր բառարանի կազմողները տեղ են հատկացրել իրենց աշխատության մեջ (ինչպես՝ автоматичность,

3 Բառարանի կազմման սկզբունքները քննել ենք ըստ «Առաջարկի» («Ռուս-հայերեն բառարան», հ. I, Երևան, 1954, էջ VII—XI):

тенистость, схожесть, шипучесть, тоlstокожесть և հարյուրավոր այլ բառեր)։

Խնդրո առարկա բառարանի ռուսական բառացանկն ամենածավալունն է ողջ ռուս-հայերեն բառարանագրության մեջ և իր հարստությամբ գերազանցում է նույնիսկ ռուսերենի քառահատոր ակադեմիական բառարանին։ Սրա հետ մեկտեղ բառարանի ռուսական բառացանկում կան նաև որոշ բացթողումներ։ Դրանց մի մասը գալիս է Դ. Ուշակովի բառարանից, իսկ մյուս մասն ուղղակի վերաբերում է հեղինակների ուշադրությունից։ Կան նաև այնպիսի բառեր, որոնք ռուսերենի բառապաշար են մտել բառարանի լույսընծայումից հետո (օր.՝ нейлон, колхозница (գոտի մի տեսակը), джинсы, злобный (метод работы), каратэ, транзистор և այլն)։ Այսպես թե այնպես, թերություն պետք է համարել առօրյա կյանքում և մանավանդ մամուլում ու հեռուստատեսությամբ հաճախ օգտագործվող այնպիսի բառերի բացակայությունը բառարանում, ինչպիսիք են авиазавод—ավիագործարան, антисоветизм—հակասովետականություն, հակասովետիզմ, антисоциалистический—հակասոցիալիստական, безотцовщина—անհայրություն, конфронтация—առձակատում, пресс-центр—մամուլի կենտրոն, регион—շրջան, инչакан նաև՝ выключатель—անջատիչ, переговоры—խոսակցություն, нагнетатель—ներմղիչ, морзе—մորզե, джин—ջին (ոգի նշանակությամբ) և այլն։

Հեղինակները բառարանի ռուսական մաս են մտնել որոշ քանակությամբ հայերեն կամ հայերենի նմանողությամբ կազմված բառեր, ինչպես օրինակ՝ арзани, грабар, джермук, ншхан, католикос, кондак, гайканский, новоармянский։ Բայց այս բառերից ոչ մեկը չկա ո՛չ ռուսերենի 17-հատորանոց ակադեմիական բառարանում, ո՛չ քառահատոր ակադեմիական բառարանում, ո՛չ էլ Ս. Օժեգովի և Դ. Ուշակովի բացատրական բառարաններում (բացառությամբ католикос բառի, որը կա միայն քառահատոր բառարանում)։ Մեզ թվում է, որ այսպիսի բառերի զետեղումը ռուս-հայերեն բառարանում ճիշտ չէ, քանի որ դրանք չեն մտնում ռուսաց լեզվի բառային կազմի մեջ և, ինչպես տեսանք, բացակայում են ռուսերենի ամենից լիակատար և հաջողված բացատրական բառարաններում։

Քառահատոր բառարանի հեղինակներն իրենց աշխատության թարգմանական բաժնի համար հիմք են ընդունել նախորդ համանման բառարաններից առավել հաջողվածներն ու լիակատարները՝ «Ռուս-հայերեն նոր բառարանը» և Հ. Դադբաշյանի «Ռուս-հայերեն լիակատար բառարանը»։ Հայկական մասի համար օգտագործվել է նաև Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը»։ Մասնագիտական մի շարք բառեր և տերմիններ ճշտված են մինչև 1950-ական թվականները հրատարակված ռուս-հայերեն մասնագիտական բառարանների միջոցով։

Թեև բառարանի հեղինակներն աշխատել են խուսափել և հրաժարվել նախորդ բառարաններում տեղ գտած արհեստական, «կեղծ» բառերից, որոնք հիմնականում կազմվելով բառարանագետների կողմից, այդպես էլ մնացել են բառարաններում և, փաստորեն, չեն մտել հայոց լեզվի ակտիվ կամ մասնագիտական բառապաշարի մեջ, բայց իրենք նույնպես գերծ չեն մնացել այդպիսի բառատեղծումից։ Օրինակ՝ ռուսերեն белочник բառը թարգմանված է ակտուամորթեզոն իրկարաշուն բառով, որը չկա ո՛չ Մալխասյանցի բառարանում, ո՛չ էլ հետագայում լույս տեսած հայերենի քառահատոր ակադեմիական և է.դ. Աղաջանի բացատրական բառարաններում։ Կամ անալատախոռ բառը, որը տրված է որպես ռուսերեն взлиза և влизна բառերի թարգմանություն։ Այս բառը նույնպես հայերենի ոչ մի բացատրական բառարանում չի նշված։ Այսպես նաև՝ овражистость—ծուրակաշատություն, հեղեղատաշատություն բառերին ևս չենք հանդիպում վերը նշված բառարաններում։ Վերահիշյալ բառարաններում չկան նաև հետևյալ բառերը. перебойник (հարկ.)—հաղորձու, плательщик (պշտն.)—վճարորդ, плательщица (պշտն.)—վճարորդ (կին), подсыпальщик (մանգ.)—ածող (բանվոր) և այլն։ Այս բոլոր

հասկացություններն հայերենին ծանոթ չեն, այդ պատճառով էլ դրանք մեկ բառով թարգմանելու բոլոր փորձերն էլ անհաջող կլինեն։ Թերևս ավելի ճիշտ կլինի այդ բառերի նշանակություններն ուղղակի բացատրել։

Հեղինակները բառարանի թարգմանական բաժնում իբրև ուսերեն բառի հայերեն համարժեքներ օգտագործել են որոշ թվով անհարկի օտար, մանավանդ արևելյան լեզուներից կատարված, փոխառություններ և բարբառային բառեր։ Օրինակ՝ на авось—յա բախտ, головойяп, головойяпство—քլալ-լազլոզ, քլալազլոզություն, казан—ղազան, кануфер, канупер—շանաֆիլ, кендырь—քենդիր (թալատու բույս), навес—չարդախ, огурец—խիար, пыжик—կոլոտ, родимый—ազիզ և այլն։

Ստուգումները ցույց տվեցին, որ այս բառերի մեծ մասը, նույնիսկ բարբառային կամ խոսակցական նշաններով, չկա վերը նշված հայոց լեզվի բացատրական բառարաններում։

Կապված ուսերենի և հայերենի բառակազմական միջոցներում և լեզուների կառուցվածքներում եղած տարբերությունների հետ, բառարանում թարգմանության փոխարեն հանդիպում են նաև նկարագրություններ կամ ուսերեն բառի բացատրություններ։ Սա ամենից առաջ վերաբերում է ուսաց լեզվի մի քանի յուրահատուկ ածանցների միջոցով կաղմված բառերին։ Այսպես, ուսերենի -ец ածանցը, հիմնականում խոսակցական լեզվում, արտահայտում է խոսողի արհամարհական, իսկ հաճախ էլ փաղաքական-մտերմական վերաբերմունքը։ Հայերենում սրան համապատասխան ածանց չկա, այդ պատճառով էլ բառարանի հեղինակները այդ ածանցով կաղմված բառերը թարգմանել են հաճախ նկարագրության միջոցով, քանի որ մեկ բառով թարգմանել, փաստորեն, հնարավոր չէ։ Օրինակ՝ дельца—գործամուկ (առանց միջոցների խտրության՝ գործնական նպատակներ հետապնդող մարդ)։ Темные дельцы—մութ (կասկածելի) գործամուկներ։ Биржевые дельцы—բորսային գործամուկներ։ Գործարար։ Дохлец—(զվռ.) 3. Շատ նվազ մարդ, խիստ նիհար մարդ, սատկածի մեկը։ Хитрец—1. հորամանկ, խարդախ (մարդ)։ Пустился мой хитрец в переговоры. К р ы л о в. մեր խարդախը բանակցել սկսեց։ Уродец (խսկց.-մտերմ.)—նվազ—փղբջ. урод՝ բառի 1 և 2 նշան, Горбаты у. սապատավոր հրեջ։ Հատկապես այս վերջին օրինակից երևում է, թե որքան դժվար է -ец ածանցով կաղմված բառերի իմաստների թարգմանությունը (սապատավոր հրեջ արտահայտությունը հայերենում երբեք չի կարող նվազական-փաղաքական երանգ ունենալ)։ Այսպես նաև -ах վերջածանցով կաղմված մի շարք բառեր, որոնք արտահայտում են որոշ հատկանիշների ավելորդության բացասական իմաստ, օրինակ՝ ушан—1. (հարկ.) Երկարականջ մարդ, ականջեղ մարդ, լոշտո։ Пузан—(խսկց.-մտերմ.)։ Հաստափոր, ցմփոր (մարդ)։ Лобан 1. մեծձակատանի, մեծաձակատ։ Ինչպես և՛ брюхан, горлан, голова, горлопан և այլն։

Ուսերենի ամենակենսունակ ածանցներից են նվազափաղաքական վերջածանցները։ Սրանց մի մասն արտահայտում է նաև խոսողի արհամարհական վերաբերմունքը։ Հայերենում այս ածանցների կիրառությունն ավելի սահմանափակ է. բոլոր բառերը չեն, որ կարող են ստանալ այս վերջավորությունները։ Բացի այդ, հայերենում, ի հակադրություն ուսերենի, այս ածանցները չեն արտահայտում արհամարհական իմաստ։ Բայց կան դեպքեր, երբ հեղինակները փորձել են ստեղծել այդ բառերի հայերեն համարժեքներ՝ մեխանիկորեն պատճենելով ուսերեն բառի կառուցվածքը։ Ստացվել են թեև ուսերենի կաղմությանը, կաղապարին հարազատ, բայց հայերենին խորթ, անգործածական և շինծու տասնյակ բառեր։ Օր.՝ кофеёк—(խսկց.)։ Նվազ—փղբջ. кофе բառի։ Սրճիկ։ Утречко—(խսկց.)։ Փղբջ. утро բառի 1 նշան, Առավոտիկ, լավ առավոտ։ Бочок—(խսկց.)։ Նվազ. бок բառի։ Կողիկ։ Стеклышко—(խսկց.)։ 1. Նվազ. стекло բառի։ Փոքրիկ ապակի, ապակակ։ Гривка—1. Նվազ. грива բառի։ Բաշիկ։ 2. Ճակատաբաշիկ (ճակատի վրա հավասար խուզած մազեր)։ Травка—նվազ. փղբջ. трава բառի։ Խոտիկ։ Шубейка—1. մուշտակիկ (փոքրիկ կարճ կանացի մուշտակ)։ Школка—2. (արհմրհ.)։

Նվազ. ШКОЛА բառի 4 նշան: Դպրոցիկ (գեղագիտական-գեղարվեստական կամ հասարակական-քաղաքական աննշանակ ուղղություն)¹:

Որոշ դեպքերում հեղինակները հայերեն թարգմանության մեջ դրել են բառի լրիվ ձևը (առանց որևէ մասնիկի), որով աղճատել են ուսերեն բառի իմաստը: Օրինակ՝ Цариска—(արհմրհ. հյհյ.): Յար, թագավոր, արքա: ОФК-ИЗЕРИШКА—(արհմրհ. հնց.): Սպա, ինչ-որ մի սպա և այլն: Սակայն այս բառարանում ավելի հաճախ նման կազմության բառերը թարգմանված են նկարագրության միջոցով, որը տվյալ դեպքում, մեր կարծիքով, առավել ճիշտ մոտեցում է և թարգմանչին հնարավորություն է տալիս, համատեքստից ելնելով, ինքնուրույնաբար ընտրել կամ, եթե կարելի է, ստեղծել հարմար բառ:

Ռուս-հայերեն բառահատոր բառարանը շունի քերականական հավելված: Այդ սլաոնառով էլ հեղինակները ուսերեն բառի մասին ամբողջ ինֆորմացիան ձգտել են տալ բառահոլովածում: Գլխաբառից անմիջապես հետո, միայն անհրաժեշտության դեպքում, ուղիղ փակագծերի մեջ տրված է բառի ճիշտ արտասանությունը: Ընդ որում, որպեսզի տեղ խնայվի՝ բերվում է բառի միայն այն մասը, որի արտասանությունը շեղվում է ուսերենի գրական արտասանության նորմաներից: Օրինակ՝ конечно [шн], тезис [тэ], саночник [шн], фидеизм [дэ], заезжий [сжэжи], сердце [рц], комиссия [нси] և այլն: Եթե բառն ունի ուղղագրական տարբերակ, փակագծում նշված է նաև այդ տարբերակը: Այս վերջին դեպքում, երբ բառն ունի կրկնակի գրություն, բառարանում թարգմանված է այն ձևը, որը ուսերենի համար առավել գերադասելի է համարվում, իսկ երկրորդ տարբերակի համար արվում է հղում:

Այնուհետև, բառահոլովածում նշված են բառի թեքված ձևերը: Գոյականների մոտ դրված է եզակի թվի սեռական հոլովի վերջավորությունը և նշված է սեռը: Բոլոր այն դեպքերում, երբ բառի թեք հոլովների կազմությունը (եզակի թի հոգնակի թվերում) շեղվում է առանց լեզվի հոլովման համակարգից, այս բառարանում տրված են նաև մնացած հոլովաձևերը: Անեզական բառերի համար նշվում է միայն հոգնակի սեռական հոլովի ձևը:

Բառարանում բայերի մոտ նշված են նրանց ներկա (անկատար կերպի բայերի համար) կամ ապառնի ժամանակների (կատարյալ կերպի բայերի համար) եզակի թվի առաջին և երկրորդ դեմքերի վերջավորությունները, օրինակ՝ делаться, -у, -несь, выгонять, -яю, -яешь, бунтоваться, -туюсь, -туешься և այլն: Այդ վերջավորությունները բերված են նույնիսկ այն դեպքերում, երբ դրանք խիստ հազվադեպ են գործածվում, օրինակ՝ президется, -ежусь, езидется: Բայերի մոտ դրված են ներգործական սեռի ներկա ժամանակի դերբայները, հրամայական եղանակը և անցյալ ժամանակը (այս երկուսը հատուկ նշումով): Ապա տրված է բայի կերպը և մյուս կերպի բայաձևը, եթե այդպիսին գոյություն ունի: Ըստ որում թարգմանված է բայի կերպերից միայն մեկը (հիմնականում կատարյալը), իսկ մյուսի մոտ հղում է արված: Կերպից հետո նշվում է բայի խնդրառությունը: Խնդրառությունը չի նշվում, եթե բայը գործածվում է առանց լրացման (ասենք՝ лежать, бежать, ходить և այլն), կամ էլ առանց լրացման է գործածվում իր նշանակություններից որևէ մեկով կամ մի քանիսով (այս դեպքում տվյալ նշանակության մոտ արված է առանց լրաց. նշումը):

Ածականների և դերբայների մոտ տրված են իզական և չեզոք սեռերի լրիվ վերջավորությունները, ապա նաև, եթե այդպիսիք կան՝ բոլոր երեք սեռերի վերջավորությունների կարճ տարբերակները: Օրինակ՝ веский, -ая, -ое; -сок, -ска, -ско, ветуистый, -ая, ое; -твист, а, о: Եթե ածականն իր նշանակություններից որևէ մեկում շունի վերջավորությունների այս տարբերակներից որևէ մեկը, ապա դա նույնպես նշված է բառարանում:

Մնացած խոսքի մասերի մոտ ուղղակի նշված է նրանց խոսքիմասային պատկանելությունը:

4 Հմմտ. Ի. Ստրելցովա, Ռուսերենի բառերի բառա-քերականական հատկանիշների արտահայտումը հայերենում («Բանբեր հրևանի համալսարանի», 1971, № 1, էջ 232):

Քառահատորը ռուս-հայերեն բառարանում գլխաբառերի համար միշտ նշված է շեշտը (բացատրությամբ միավանկ բառերի, որոնցում շեշտի տեղն ինքնըստինքյան պարզ է): Եթե ռուսերենում բառն տնի շեշտի հետ կապված կրկնակի արտասանություն, բառի վրա դրված է երկու շեշտ: Կրկնակի շեշտ է դրված նաև հարադիր բարդությունների բաղադրիչների վրա, եթե այդ բաղադրիչներն արտասանվում են ինքնուրույն շեշտով, ինչպես՝ *воённо-полевому, историко-революционному, марксистско-ленинскому* և այլն: Այն դեպքերում, երբ գլխաբառն արտասանվում է առանց շեշտի (սովորաբար նախդիրները և շաղկապները), արված է հատուկ նշում՝ (անշեշտ): Շեշտը նշված է նաև բոլոր այն դեպքերում, երբ բառի թեքման պատճառով այն փոխում է իր տեղը: Բառարանում ռուսերեն բառի (երբ այն բազմիմաստ է) տարբեր նշանակություններն առանձնացված են արաբական թվանշաններով: Այս բառարանի կազմության սկզբունքների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ բառի նշանակությունների հիմնական նրբերանգները բաժանված են երկու ուղղաձիգ գծերով:

Բառարանում թարգմանությունները մեծ մասամբ լուսաբանված են բնագրային օրինակներով: Թարգմանական բառարանների կազմության պրակտիկայում սա հազվադեպ է կիրառվում: Օրինակն ընթերցողին հնարավորություն է տալիս առավել ճիշտ ընկալել թարգմանվող բառը, նրա նշանակության տարբեր երանգները, կիրառության հնարավոր դեպքերը: Բառարանի հեղինակներն իրենց օրինակները վերցրել են Ուշակովի խմբագրությամբ հրատարակված «Ռուսերենի բացատրական բառարանից»: Այդ բառարանում էլ, իր հերթին, օգտագործված են բնագրային օրինակներ ռուս դասական և ժամանակակից գրականությունից, մարքսիզմ-լենինիզմի դասականների երկերից: Ինչպես հեղինակներն են նշում, բեռված են բնույթով և համառոտ օրինակներ (ըստ հնարավորության): Սակայն բառարանում հանդիպում են նաև երկաբաշունչ օրինակներ, որոնք, բացի դրանից, այնքան էլ չեն լուսաբանում ռուսերեն բառի միտքը: Սա վերաբերում է մանավանդ այն միջազգային բառերին ու տերմիններին (մասնավորապես քաղաքական տերմիններին), որոնք բառարանում պարզապես տառադարձված են հայերեն: Այդ բառերի մի մասի հայերեն համարժեքները կան, բայց բառարանում տեղ չեն գտել: Ահա այդպիսի բառերի համար բերված օրինակները, եթե բառարանից օգտվողը նախապես չգիտի դրանց իմաստները, դրանք չեն կարող ընթերցողի համար լուսաբանել տրվյալ բառի նշանակությունն ու արտահայտել նրա երանգները, ցույց տալ տվյալ բառի կիրառությունները, ինչպես նշում են բառարանի հեղինակներն աշխատության սկզբում (էջ XIX): Այսպես, агитировать բայի համար բերված է հետևյալ երկաբաշունչ օրինակը՝ իր թարգմանությամբ հանդերձ. И уже сейчас [1933 г.] мы должны не только агитировать и пропагандировать результаты первой пятилетки, но делом показать, как мы подготовляемся и вооружаемся для дальнейшей нашей социалистической стройки. Կ и р о в. Եվ հիմա արդեն [1933 թ.] մենք պետք է ոչ միայն ագիտացիա և պրոպագանդա մղենք առաջին հնգամյակի արդյունքների մասին, այլ գործով ցույց տանք, թե ինչպես ենք մենք պատրաստվում ու զինվում մեր հետագա սոցիալիստական շինարարության համար: Այսպիսին են նաև большевизация, интернационализм, аракеевский, акция, аутичный, большевизм, большевистский, бюрократизм, коммунизм և բազմաթիվ այլ բառերի օրինակները: Ըստ երևույթին, ավելի ճիշտ կլիներ այսպիսի բառերի տառադարձումից, և, եթե հնարավոր է, թարգմանությունից հետո, տալ նաև նրանց բացատրությունը, իսկ օրինակ չբերել (ինչպես և, որոշ դեպքերում վարվել են բառարանի հեղինակները):

Օրինակների ընտրության և թարգմանության մեջ կան նաև այլ սխալներ և վրիպակներ: Դրանցից մեկը նշում են հենց իրենք՝ հեղինակները. «նստիվ սակավ դեպքերում բառի թարգմանությունը օրինակներում չի համընկնում հիմնական բառի թարգմանության հետ» (Առաջաբան, էջ XVII): Սա, ճիշտ է, հիմնականում վերաբերում է ռուսերենի այնպիսի նախածան-

ցավոր բառերին (до-, за-, пере- և այլն), որոնք հայերեն թարգմանված են միայն նկարագրական եղանակով, սակայն կան նաև անհամապատասխանությունն այլ դեպքեր, որոնց ժամանակ օրինակը դառնում է ավելորդ և աննպատակահարմար, ինչպես՝ *корреляция* (գիտ.)—կոռելյացիա, հարաբերակցություն, համահարաբերություն: Рост безработицы в капиталистических странах и количество уголовных преступлений находятся в прямой корреляции друг к другу. Կապիտալիստական երկրներում գործազրկության աճումը և քրեական հանցագործությունների քանակը ուղիղ համահարաբերական են իրար: Այստեղ համաձայնեցված-ը *коррелянт* բառի համարժեքն է:

Օրինակների թարգմանության ժամանակ թույլ են տրված նաև հայերենի շարահյուսական օրենքների խախտումներ և ուսաբանություններ: Այսպես, *враки* բառի օրինակում կարդում ենք. И тот дурак, кто слушает людских всех врак. К р ы л о в. Նա էլ է հիմար, ով լսում է մարդկանց բոլոր ստերին: Հայերենում ստեղծ խնդիրը պետք է դրվեր ուղղական (այլ անվանմամբ՝ ուղղականաձև հայցական) հոլովով: Ահա նաև *կեբեդե-կումալի* հայտնի բանաստեղծության տողի թարգմանությունը. Молодым—везде у нас дорога, старикам—везде у нас почет. Զահեղներին—ամենուրեք մեզ մոտ ճամփա, ծերերին—ամենուրեք մեզ մոտ հարգանք (այս օրինակը բերված է *везде* բառի համար): Հայերենում, ի տարբերություն ռուսերենի, նախադասության մեջ պետք է առկա լինի բայը (տվյալ դեպքում ճիշտ կլիներ. ճամփա է տրվում, նաղգանք է մատուցվում): Ռուսերենում *ремонтиться* (նորոգվել, վերանորոգվել) բայը փոխաբերաբար ունի նաև բժշկվել, առողջությունը վերականգնել իմաստները, հայերենի վերանորոգվել բառն այդ իմաստները չունի: Իսկ ահա թե *ремонтиться* բառի փոխաբերական նշանակության համար ինչ օրինակ է բերված և ինչպես է այն թարգմանված բառարանում. Поеду в Крым р. կգնամ Ղրիմ վերանորոգվելու (առողջությունս վերականգնելու):

Բառարանում հանդիպում են ոչ սակավ դեպքեր, երբ բառահոգվածի ճակակաճ բաժնում ռուսերեն բառը թարգմանված է մի ձևով, իսկ օրինակում կամ որպես կայուն բառակապակցություն բերված դեպքերում նույն բառի համար իբրև հայերեն համարժեք օգտագործված է մի այնպիսի հոմանիշ, որը չկա թարգմանության մեջ, կամ էլ օրինակի բառը պարզապես տառադարձված է հայերեն: Այսպես, բառարանում կարդում ենք. Отолгался (խսկց.)—Սուտ խոսել, սուտ ասելով պրծնել (բոլոր հարցերին սուտ պատասխաններ տալով դժվար դրությունից դուրս գալ): Попался да отолгался (սասցված) ընդ-վեց, բայց փշոցով ազատվեց: Диск—Սկավառակ: Д. автоматического ружья—ավտոմատ հրացանի դիսկ: Бурый—Մուգ դարչնագույն, մուգ || Թխաթուր (բրդի գունի մասին): Бурый уголь (մանգ.)—գորշ ածուխ (ցածր տեսակի քարածուխ): Рекатурализация (պշտն.)—1. Քաղաքացիության իրավունքների վերականգնում: Р. эмигрантов էմիգրանտների ռեինտոգրալիզացիա և այլն:

Եթե հայերեն բառն իր բոլոր կամ մի քանի իմաստներով համընկնում է ռուսերեն բազմիմաստ բառի տարբեր նշանակություններին, ապա կարիք չկա թարգմանական բառարանում այդ իմաստներն առանձնացնել, ինչպես վարվել են ուսու-հայրեն քառահատոր բառարանի հեղինակները: Բացի դրանից, այդ իմաստները բառարանում բացատրված են: Օր.՝ амортизация 1. Ամորտիզացիա (փաստաթղթի գործողության դադարեցում, այն անվավեր համարելը): 2. (Ֆին.). Ամորտիզացիա (պարտքի աստիճանական մարումը): 3. Ամորտիզացիա (զեղչելու միջոցով գույքի արժեքի աստիճանական մարում՝ նրա բնականորեն մաշվելու հետևանքով): Арматура 1. (տեխ.). Արմատուրա (որևէ ապարատի կամ մեքենայի երկրորդական սարքերն ու պատկանելիքնե-

րը): 2. (տեխ.) Արմատուրա (էլեկտրական լուսավորութեան սարքավորման առարկաների կոմպլեկտ): 3. (տեխ.) Արմատուրա (երկաթ-բետոնի կառուցվածքների երկաթե հիմքը): Либерализм (գրք.): 1. Լիբերալիզմ (քաղաքական գաղափարների՝ հայացքների և ձգտումների այնպիսի սխտեմ, որ հատուկ է արդյունաբերական բուրժուազիայի իդեոլոգիային նրա վերելքի շրջանում, բուրժուազիա, որը վախկոտաբար և անհետևողականորեն պաշտպանում է քաղաքական ազատությունները, ելնելով «ձեռքբերման ազատության» և պրոլետարիատին շահագործելու նկատառումներից): 2. (քղք. պատում): Լիբերալիզմ (լիբերալների քաղաքական կամ սոցիալական շարժում): Фаза 2. (աստղգ.): Փուլ, 3 (ֆիզ.): Փուլ, 4. (երկրբ.): Ֆազ (ժամանակի նվազագույն միավոր, որին համապատասխանում է հանքատեսակի որոշ բնույթը): 5. (ֆիզ. տեխ.): Ֆազ (գեներատորի փաթաթների առանձին խումբ) և այլն: Նշանակումների այսպիսի համընկնման դեպքում նպատակահարմար կլինենր ուսերենն բառի այդ իմաստները թարգմանել հայերեն մեկ համարժեքով, իսկ դրա տեղի փոխարինումը թողնել բացատրական բառարաններին: Սա կնպաստի նաև տեղի խնայմանը և բառարանի ծավալի կրճատմանը:

Բառահատոր բառարանում մեծ տեղ է հատկացված ուսերենի դարձվածաբանությանը (հեղինակների անվանմամբ՝ ֆրազեոլոգիային): Սա բառարանի ամենաարժեքավոր կողմերից է: Դարձվածաբանություն հասկացության տակ հեղինակները միավորել են ամենատարբեր բնույթի բառակապակցություններ՝ առարկաների ու երևույթների բաղադրյալ անուններ, բաղադրյալ տերմիններ, բաղադրյալ նախդիրներ, շաղկապներ և մակբայներ, կայուն ասույթներ: Այս խմբի մեջ են մտցված նաև իդիոմները, ասացվածքները, առածներն ու թեւավոր արտահայտությունները, ինչպես և անտիկ դիցաբանությունից եկող արտահայտությունները: Այսպիսի բառակապակցությունները տրված են բառահոգվածի վերջում՝ հատուկ նշանից հետո: Հեղինակները ճիշտ կերպով դարձվածքները տեղադրել են կապակցության հիմնական բառի բառահոգվածում, որով և խուսափել են ավելորդ կրկնություններից: Սակայն այս բաժինը զերծ չէ որոշ օբյեկտիվ թերություններից: Այս հատվածում կան բազմաթիվ այնպիսի արտահայտություններ, բաղադրյալ տերմիններ, որոնց թարգմանությունները բառարանի հրատարակության ժամանակ դեռևս չէին կայունացել, չկար նրանց միօրինակություն: Այժմ այդպիսի բառակապակցությունների թարգմանությունն հիմնականում կայունացված և ճշտված է: Այսպես, белая горючка արտահայտությունը (տես белын բառի տակ) թարգմանված է արգեցատեղե (պլեոնոլամալների հիվանդության) ձևով, իսկ այժմ օգտագործվում է սպիտակ տեղ տերմինը: Կամ базар բառի մոտ օգտագործված пучиւն базар կապակցության դիմաց գրված է ծովափնյա բըռչնաճալաք (այժմ բռչնաշուկա): Аптекарскаւ магазин արտահայտությունը թարգմանված է հնացած գեղախանութ. գեղավաճառանց բառերով (տես аптекарски բառը): Бойн бьков արտահայտությունը թարգմանված է ցլաճարա, ցլախով, որոնցից միայն առաջինն է ալժմ գործածական: Այժմ ճշտվել են նաև звездная ассоциация (աստղգ.)—աստղասփուռ, աստղերի ասոցիացիա (տես ассоциация), ароматическае соединення (քիմ.)—արոմատիկ միացություններ (հոտավետ ածխաէթերիներ) (տես ароматический), генеральский директор—գեներալ-դիրեկտոր (տես генеральный), аттестат зрелости—հասունության ատեստատ (տես аттестат) անվանումների հայերեն թարգմանությունները (համապատասխանաբար՝ աստղային ասոցիացիա, բուրավետ միացություններ, գլխավոր դիրեկտոր, հասունության վկայական):

Բառարանի թարգմանական բաժնում հեղինակները ձգտել են ընդգրկել ուսերենն բառի բոլոր նշանակությունները և դրանց երանգները՝ իրենց կարեւորագույն հոմանիշներով հանդերձ, թարգմանական բառաշարքի ներսում նշանակությամբ շատ մոտ բառերն անջատված են ստորակետով, իսկ ոչ այնքան մոտերը՝ վերջակետով: Սակայն ուսերենն բառի միևնույն նշանակության թարգմանությունը մի քանի հայերեն հոմանիշներով չի խախտում բառարանի

նորմատիվությունը, քանի որ դրանք դասավորված են այնպես, որ ամենաընդունելի բառը գտնվի թարգմանվող բառին ամենամոտ տեղում: Բառարանում լայնորեն կիրառված է նաև թարգմանությանը զուգահեռ բառի բացատրությունը, որն այս տիպի բառարանի համար շատ դեպքերում բոլորովին ավելորդ է: Բացատրությունը տրված է թարգմանությունից հետո, փակագծերի մեջ և վերաբերում է բառախմբի հիմնական բառին:

Խեղճ հեղինակներն իրենց աշխատության մեջ պարզեցրել են Դ. Ուշակովի բառարանի հղումների համակարգը, սակայն բառարանի որոշ բառահոգվածներ այնուամենայնիվ ծանրաբեռնված են ավելորդ հղումներով: Օրինակ՝ բառարանում կարդում ենք. Покудова (հարկ.)—Ճես пока, куда; Ի՞նչ հերթին куда ձեր նույնպես ունի հղում пока ձերն: Пеленгация բառը ևս ունի երկու հղում՝ пеленгование և пеленгирование: Սրանցից վերջինը բառարանում թարգմանված չէ, նրա համար հղում է տրված пеленгование ձերն: Այս և նման դեպքերում հղումը երկրորդ բառածին (ավելի դեպքում куда և пеленгирование ձերն) բոլորովին ավելորդ է:

Ռուս-հայերեն ակադեմիական քառահատոր բառարանը մեծապես նրպաստել է հայ ընթերցողի կողմից ռուս զրական լեզվի անսպառ հարստություններին յուրացմանը, ուստի բազմաթիվ բառերի թարգմանության կարգավորմանը: Բառարանն իր որոշակի դերն է խաղացել նաև հայերենի բառապաշարի նորմատիվման, հայերենի ուղղագրության որոշ հարցերում եղած անմիօրինակության վերացման, ուստիներից փոխառյալ բառերի տառադարձման գործում: Սակայն ստեղծված լինելով ավելի քան երեսուն տարի առաջ, այս բառարանն իր բառացանկով և հատկապես կազմության սկզբունքներով այժմ րավականին հնացել է, իսկ 1968 թվականից հետո, երբ լույս տեսավ միահատոր «Ռուս-հայերեն բառարանը», զգալիորեն նվազել է նրա գործնական նշանակությունը:

КРИТИЧЕСКИЙ ОБЗОР РУССКО-АРМЯНСКОГО ЧЕТЫРЕХТОМНОГО СЛОВАРЯ

МАНУК ФАЛАКЯН

Резюме

Четырехтомный «Русско-армянский словарь» (Ереван, изд-во АН Арм.ССР, 1954—1958) содержит около 100.000 словарных статей. Основу словника данного словаря составляет «Толковый словарь русского языка» Д. Н. Ушакова. В словнике словаря сделаны следующие дополнения: прибавлены слова и выражения, вновь созданные в русском языке после выхода в свет словаря Ушакова, новейшие аббервации. В русско-армянской лексикографии впервые в четырехтомном словаре выделены как заглавные слова отглагольные существительные с суффиксами—ание, -ение, тие, отвлеченные существительные с суффиксами -ость. Одним из достоинств словаря является то, что он богат русскими фразеологическими оборотами и устойчивыми словосочетаниями.

В русском словнике исследуемого словаря есть некоторые недостатки: напр., в словаре отсутствуют слова с префиксами анти-, архи-, наи-, ультра-. В словаре переведены и истолкованы только эти префиксы. Между тем такие слова должны быть переведены, так как в их переводе на армянский язык нет единообразия, что может привести к путанице.

Наряду с очевидными достоинствами переводного раздела словаря есть и определенные недостатки. Авторы попытались создать армянские эквиваленты тех русских понятий, которых нет в армянском языке. Однако эти новые слова большей частью неудачны и не вошли в лексику армянского языка. Спорным представляется использование текстуальных примеров в словарях данного типа. Имеются недостатки и в системе отсылок словаря.